ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կոտայքի մարզի Արամուս համայնքի հաշվետու համայնքային ժողովի

27 օգոստոս 2015 **գ. Արամուս**

2015 թվականի օգոստոսի 27-ին տեղի ունեցավ Արամուս համայնքի հաշվետու համայնքային ժողովը՝ համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների մասին:

Ժողովին ներկա էին համայնքի ավագանու 9 անդամներ `

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՐԵԿ
2. ԵՂԻՇՅԱՆ ԱՇՈՏ
3. ՄԻՐԶՈՅԱՆ ԱՐԳՈ
4. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՄՀԵՐ
5. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՀՐԱՄ
6. ՀՈՒՆԱՆՅԱՆ ՎԱՀԱՆ
7. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ ԳԵՂԱՄ
8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ
9. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ՎԱՀԱՆ

Համայնքի ղեկավարի աշխատակազմից `

10.Խաչատրյան Ապրես
11.Ստեփանյան Նորայր
12.Նիկողոսյան Սամվել
13.Վարդանյան Վերգինե
14.Վարդանյան Հրաչյա
15.Եղիազարյան Կարինե
16.Գեղամյան Տիգրան
17.Ղազարյան Անուշ
18.Հակոբյան Ավետիք

Ժողովին մասնակցում էին համայնքի մի խումբ բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:

ԼՍԵՑԻՆ՝

Համայնքի ղեկավար Հրայր Նիկողոսյանի զեկույցը 2014 թվականի երկրորդ կիսամյակի և 2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից իրականացված հիմնական գործառույթների մասին:

2014 թվականի դեկտեմբերի 16-ին համայնքի ավագանու N 74-Ն որոշմամբ հաստատվել է 2015թ. համայնքի բյուջեն, ըստ որի եկամուտները կազմել են 79157.8 հազ. դրամ, ծախսերը՝ 93746.3 հազ. դրամ: Պակասուրդը կազմել է 14588.5 հազ. դրամ, որը լրացվում է համայնքի բյուջեի մնացորդի հաշվին: Հողի հարկի չափը կազմել է 6700.0 հազ. դրամ, հավաքագրվել է 3216.6 հազ: Գույքահարկը նախատեսվել է 7700.0 հազ. դրամ հավաքագրվել է 6160.4 հազ.դրամ: Տեղական տուրքերը նախատեսվել է 810.0 հազ. դրամ հավաքագրվել է 546.3 հազ. դրամ: Հողի վարձավճարներից հավաքագրվել է 1721.1 հազ. դրամ:

Այս ժամանակահատվածում գյուղապետարանի շենքի վերանորոգման նպատակով ծախսվել է21745.9 հազ. դրամ, իսկ ջեռուցման համակարգի վերականգնման համար ծախսվել է 3705.0 հազ. դրամ և կատարվել են համապատասխան աշխատանքները:

Համայնքի Սուրբ Հակոբ եկեղեցու տարածքում տեղադրվել է 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող հուշակոթող, որի համար ծախսվել է 1750.0 հազ. դրամ:

Համայնքը մեծ պատրաստակամությամբ է օժանդակում սոցիալական օգնության ծառայության բնագավառը: Օգնության խնդրանքով դիմած անապահով ընտանիքներին, մահացած բնակչների հարազատներին, համայնքում նոր ծնված երեխաների մայրերին, հաշմանդամներին տրվել է սոց. օգնություն համայնքի բյուջեից հաշվետու ժամանակաշրջանի համար 5490.0 հազ. դրամի չափով:

Համայնքի բյուջեից աջակցություն է ցուցաբերվել պետական բուհերում սովորող անապահով ընտանիքների ուսանողներին՝ փոդանցվել է ուսման վարձավճար՝ 1505.0 հազ. դրամի չափով և համայնքում հաշվառված գերազանցիկ ուսանողներին ու ավագ դպրոցը գերազանց ավարտած աշակերտներին՝ տրվել է դրամական օգնություն՝ 700.0 հազ. դրամի չափով:

Համայնքի բյուջեի միջոցներից, համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և ստեղծված սոցիալական ծառայության հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրություններից ելնելով համայնքի բյուջեից 5616.7 հազ. դրամի չափով կատարվել է հիվանդանոցային ծառայությունների արժեքի

փոխհատուցում, համայնքի բնակիչների առողջական խնդիրների լուծման նպատակով:

Բնակիչների դիմումների հիման վրա, համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և կատարված ուսումնասիրություններից ելնելով կատարվել է Երիտասարդական թաղամասի սելավատարի մաքրման աշխատանքներ, որի ընդհանուր արժեքը կազմել է 650.0 հազ. դրամ:

ԵԼՈՒՅԹՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի բնակիչներ Հայրիկ Սիմոնյանը, Լևոն Ղարախանյանը և Նահապետ Պետրոսյանը հարց բարձրացրեցին Արամուսի սեփականաշնորհված հողերին կից սելավատարի մաքրման աշխատանքների մասին, որը խոչընդոտում է վարելահողերի մշակման աշխատանքներին, իսկ համայնքի 3-րդ փողոցի բնակիչների կողմից հարց բարձրացվեց փողոցի ճանապարհի հարթեցման և կարգավորման մասին:

Համայնքի ղեկավարը հավաստիացրեց, որ կաջակցի խնդիրների լուծմանը:

ՈՐՈՇՎԵՑ

2. Համայնքի ղեկավարի հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

Արամուս համայնքի ղեկավար՝ *Հ. Նիկողոսյան*